

ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՐՄԱՅԻ ՄԻՋԵՎ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը _____
այսուհետ՝ «Ձեռնարկություն», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____

կազմակերպության անվանումը _____
այսուհետ՝ «Ֆիրմա», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է, որպես սեփականություն, մյուս Կողմին հանձնել ապրանք՝ փոխանակելով այն մեկ այլ ապրանքի հետ:

1.2. Ձեռնարկության կողմից փոխանցվող ապրանքի անվանումը, քանակը և որակը սահմանվում են հավելված 1-ով:

1.3. Ֆիրմայի կողմից փոխանցվող ապրանքի անվանումը, քանակը և որակը սահմանվում են հավելված 2-ով:

1.4. Փոխանակման ենթակա ապրանքները (հավելված 1 և 2) համարվում են համարժեք, իսկ հանձնման և ընդունման ծախսերը իրականացնում է այն կողմը, որը կրում է համապատասխան պարտավորություններ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ձեռնարկությունը պարտավորվում է սույն պայմանագրի ստորագրման պահից հաշված _____ օրվա ընթացքում Ֆիրմային փոխանցել հավելված 1-ում նշված ապրանքները՝ հասցնելով այն Ֆիրմայի պահեստ, որը գտնվում է _____ հասցեում:

2.2. Ֆիրման պարտավորվում է Ձեռնարկության կողմից 2.1. կետով նշված պարտավորության կատարման պահից հաշված _____ օրվա ընթացքում Ձեռնարկությանը փոխանցել հավելված 2-ում նշված ապրանքները՝ հասցնելով այն Ձեռնարկության պահեստ, որը գտնվում է _____ հասցեում:

2.3. Ապրանքների որակի և քանակի ընդունում-հանձնումը Կողմերը իրականացնում են ապրանքների փոխանցման օրը՝ Կողմերի ներկայացուցիչների ներկայությամբ: Ներկայացուցիչների լիազորումը պետք է հավաստվի լիազորագրով:

2.4. Ապրանքների յուրաքանչյուր ընդունման-հանձնման արդյունքով Կողմերը կազմում են ընդունման-հանձնման արձանագրություն:

3. Հաշվարկների կարգը և գինը

3.1. Սույն պայմանագրով կողմերի միջև դրամային արտահայտությամբ հաշվարկներ չեն իրականացվում:

3.2. Սույն պայմանագրով գործառույթների հաշվառում իրականացնելու նպատակով ապրանքների արժեքը կազմում է՝

ա) ըստ հավելված 1-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը.

բ) ըստ հավելված 2-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագրով փոխանակվող ապրանքների սեփականության իրավունքը ապրանքն ընդունող Կողմին անցնում է այդ ապրանքն իրեն փոխանցելու պահից:

4.2. Սույն պայմանագրին կից կիրառվում են համապատասխան առքուվաճառքի մասին սկզբունքներ: Այդ դեպքում Կողմերից յուրաքանչյուրը ճանաչվում է ապրանքի վաճառող, որը պարտավորվում է հանձնել, և ապրանքի գնորդ, որը պարտավորվում է ընդունել՝ իբրև փոխանակություն:

4.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի վավերացման (ստորագրման) պահից և գործում է մինչև « _____ » _____ թ.

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Ապրանքների հանձնման պարտավորությունների կատարման ընթացքում ժամկետանց թույլ տված Կողմը մյուս Կողմին վճարում է տուժավճար՝ փոխանցման ենթակա ապրանքի _____ տոկոսի չափով՝ ժամկետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.2. Այլ դեպքերում Կողմերի պատասխանատվությունը սահմանվում է գործող օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

6.1. Ձեռնարկություն _____

6.2. Ֆիրմա _____

Ձեռնարկություն

Ֆիրմա

ստորագրություն

ստորագրություն